<b>Christmas Gifts for Children</b>	787	7,296	12,592	€14,166
<b>1. Stationary</b>				
Pencil		8562	171	258
Color pencils		5250	945	300
Crayons		1520	114	291
Markers		6958	501	658
Pens		8500	340	350
Notebooks		7200	662	440
Notepads		5528	627	165
Coloring book		2540	528	254
Coloring album		3548	1149	284
Colorful papers		1200	240	799
Rubber		6520	150	978
Sharpener		7000	91	560
Decorative Scissors		1232	22	198
Coloring books for kids		520	78	416
Plasticine		354	124	350
Ruler		7235	95	578
<b>2. Hygiene items</b>				
Toothbrush		7300	139	250
Sponge		1500	81	450
Comb		2528	137	325
Hair accessories		5650	102	382
Towel		7256	232	380
<b>3. Cuddly toy</b>		7350	1103	680
<b>4. Toys and games</b>				
Car		3450	362	241
Doll		3424	185	142
Ball		356	30	217
Balloon		1598	34	159
Lego		562	59	420
Strings		120	14	145
<b>5. Cloths</b>				

Team Hope, 5 Leopardstown business Centre, Ballyogan Avenue, Dublin 18, Ireland  
Tel: 00353 1 2940222 Fax: 00353 1 2940311  
Email: info@teamhope.ie  
www.teamhope.ie  
Team Hope is registered as a charity, number CHY 14524

21.2/4

Scarf		7260	617	720
Hat		7288	612	728
Gloves		7290	583	458
Shirt		4980	1500	498
Pants		1254	502	254
Socks		7275	320	363
Underwear		1825	55	185
6. Jewelry		2920	88	290
<b>Total Load</b>	787	7,296	12,592	€14,166

Signed by

Stephen Conway (International Projects Coordinator)

For Team Hope

Date: January 31, 2012

Team Hope, 5 Leopardstown business Centre, Ballyogan Avenue, Dublin 18, Ireland  
Tel: 00353 1 2940222 Fax: 00353 1 2940311  
Email: info@teamhope.ie  
www.teamhope.ie  
Team Hope is registered as a charity, number CHY 14524

**Բեռի մանրամասն նկարագրություն**

Ում: «Նոր ժամանակ» բարեգործական հասարակական կազմակերպություն  
 Հասցեն: Ա. Առաքելյան 2ա/36, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

2/4

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
 ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
 2012 թվականի N Մ-  
 քաղ. Երևան

-Ա 2/5.1

Ապրանքների նկարագիրը	Քանակ		Քաշը (կգ)	Արժեքը (Եվրո)
	Արկղ	Իրական նվերների տոսի		
Ամանորյան նվերներ երեխաների համար	787	7,296	12,592	€14,166
	<b>հատիկ</b>			
<b>1. Գրեմական ախտույթներ</b>				
Գունավոր մատիտ		5250	945	300
Գրայրոնա մատիտ		1520	114	291
Ֆլումաստեր		6958	501	658
Գրիչ		8500	340	350
Տետր		7200	662	440
Նոթատետր		5528	627	165
Ներկելու գիրք		2540	528	254
Նկարչական այրոն		3548	1149	284
Գունավոր թուղթ		1200	240	799
Ռետին		6520	150	978
Սրիչ		7000	91	560
Դեկորատիվ մկրատ		1232	22	198
Մանկական նկարազարդ գիրք		520	78	416
Պլաստիլին		354	124	350
Քանոն		7235	95	578
<b>2. Հիգիենիկ պարագաներ</b>				
Ատամի խոզանակ		7300	139	250
Մալոնգ		1500	81	450
Մանր		2528	137	325
Մազակալ		5650	102	382
Սրբիչ		7256	232	380
<b>3. Փափուկ խաղալիք</b>		7350	1103	680
<b>4. Խաղեր և խաղալիքներ</b>				
Մեքենա		3450	362	241
Տիկնիկ		3424	185	142
Գնդակ		356	30	217
Փուչիկ		1598	34	159
Լեզո		562	59	420
Պարան		120	14	145
<b>5. Հագուստ</b>				
Շարֆ		7260	617	720
Գլխարկ		7288	612	728
Չեռնոց		7290	583	458
Բլուզ		4980	1500	498
Տաքատ		1254	502	254
Գուլպա		7275	320	363
Ներքնագգեստ		1825	55	185
<b>6. Բիծուտերիա</b>		2920	88	290
<b>Ընդհանուր քանակը</b>	<b>787</b>	<b>7,296</b>	<b>12,592</b>	<b>€14,166</b>

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԲԱԶՄԱՋԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱ-ԴԻՎԱՄ»-Ի ՀԱՄՅԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի -ի N 3/3.8-2/-12, Հայաստանի Հանրապետության աշխարհաքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի -ի N ՖԲ/ԱՆՄ-5/-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի -ի N ԱԱ/3-6/-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ստացված խառը բեռի (269 տեղ, 13042 lbs ընդհանուր քաշով, 95298 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխարման ծախսերը կազմում են 6300 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

2. «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:


3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Լոռու, Սյունիքի, Շիրակի մարզպետներին ու Երևանի քաղաքապետին:

Ստորագրված է Մտիլեն Բոնվենի կողմից (միջազգային ծրագրերի կոորդինատոր)  
 Թիմ Հոփ

«Գուրգեն Մելիքյանի» Քառասարկի բազմազանակալի գնումների հիմնարկների հիմնարկում ստորագրում է «Հավաքված Միացյալ հիմնարկում» կողմից ուղարկված 269 տեր, 13 042 LBS թաշիկ, 95 296 ԱՄՆ դոլար պարտությունը, ճանապարհորդական 6300 ԱՄՆ դոլար բեռի բաշխման ցանկը:

20.2/5.1

ԳԲ	Ապրանքի անվանումը	վնասված քանակություն? տոմսով	տղանկ	Թաշ քորտու LBS	Տ Ծծրք \$	ընթացակարգ	հարկ	կապիտալ	ցածր	ԳԵՄԻՆ	ԳՅՄԻՆ	ԳՎԻՄԻՆ	ԳԻՄԻՆ	ԳԻՄԻՆ	ԳԻՄԻՆ	ԳԻՄԻՆ	ԳԻՄԻՆ	ԳԻՄԻՆ	ԳԻՄԻՆ	ԳԻՄԻՆ	ԳԻՄԻՆ	ԳԻՄԻՆ	ԳԻՄԻՆ	
1	Հավաքված թուղթ/	-	226	9,822	53,805	88	-	-	34	7	13	-	17	18	9	11	-12	2	8	7	-	-	-	-
2	Վառանգի պարտավ	233	2	280	3,000	112	-	-	-	-	10	-	40	20	2	6	36	-	-	7	-	-	-	-
3	Դայրուակ	82	4	189	905	32	-	5	-	-	-	-	17	21	2	1	-	-	3	1	-	-	-	-
4	Մոմոտու պարտավան	278	10	496	3,110	96	-	-	30	36	1	-	14	1	-	5	75	-	5	15	-	-	-	-
5	Կտոր	766	8	584	3,565	-	-	-	36	36	-	-	579	-	-	-	133	17	1	-	-	-	-	-
6	Գլոր	244	2	705	1,433	67	-	-	-	-	-	-	42	44	2	-	-	-	-	20	-	-	-	-
7	Կոշիկ /նոր/	219	3	212	2,455	22	-	-	-	1	-	-	75	42	2	-	69	8	-	-	-	-	-	-
8	Խաղաղվոր /նոր/	93	-	-	595	8	-	-	17	14	3	-	51	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
9	Տակագոր /մեծի/	90	-	-	210	-	-	-	-	90	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
10	Տակագոր /ամրություն/	222	1	34	305	-	-	-	-	216	-	-	6	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
11	Արտատր	74	-	-	700	14	-	-	-	-	-	-	31	4	5	-	-	-	-	-	-	-	-	-
12	Բուժ պարագա	97	1	33	685	5	75	-	-	-	-	-	6	4	-	-	-	-	-	7	-	-	-	-
13	Լուսանյութների պարտ	8	-	-	145	2	-	-	-	-	-	-	3	3	-	-	-	-	-	-	-	-	-	-
14	Չեմոնգ	8	-	-	55	6	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-	-
15	Դիկորագիա	1	-	-	15	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
16	Ֆուտբոլի պարագամոր	60	-	-	640	17	-	-	-	-	-	-	20	8	-	-	-	-	-	15	-	-	-	-
17	Շարֆ	11	-	-	100	9	-	-	-	-	-	-	20	8	-	-	-	-	-	2	-	-	-	-
18	Գլխարկ	15	-	-	180	6	-	-	2	-	-	-	-	2	-	-	-	-	-	1	-	-	-	-
19	Գուշի	5	-	-	30	5	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
20	Չեմոնգ աշխ. պարագա	250	-	-	375	-	-	-	-	-	-	-	250	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
21	Խաղ	29	-	-	150	-	-	-	-	-	-	-	29	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
22	Կարի պարագա	156	-	-	590	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
23	Նամթաղ. պարագա.	16	1	31	250	-	-	-	-	-	-	-	133	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
24	Նվարի շոքամակ	20	-	-	50	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	16	-	-	-	-
25	Գուլպա	10	-	-	20	-	-	-	-	-	-	-	10	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
26	Դենակ	2	1	4	120	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
27	Քարակ	5	2	16	200	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-	-
28	Սալակ	1	1	40	600	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	3	-	-	-	-
29	Բուժ աքոռ	2	2	18	150	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	-	-	-	-
30	Բուժ ձանձակալ	2	2	440	20,000	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
31	Ալյուրի տուփ	600	3	138	900	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը		-	269	13,042	95,298	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	600



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԵՐԻ և ԱՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐԱԿՈՒՆԵՐԻ ԿԱՐԳԻ ԱՊՏԱԿԱՆ ԱՍՏՈՒՄԻ ԱՐԿԻՎ  
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

20.2/5.1

0010, Երևան, Մելիք-Աղայանի փող. 1  
Հեռ. (+374 10) 59 52 26

1.02.12 № 3/3.8-2/999-12

Ձեր № \_\_\_\_\_

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 27.01.2012թ. N15/15.1/971-12 գրությամբ ներկայացված «Գուրգեն Մելիքյանի բազմազանակալի ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում եմ որոշման նախագծի 3-րդ կետում ներառել նաև ՀՀ առողջապահության և ՀՀ կրթության և գիտության նախարարություններին, Երևանի քաղաքապետարանին, Սյունիքի, Արմավիրի, Լոռու և Շիրակի մարզապետարաններին:

Հարգանքով՝

*Ա. Շուշյան*

Ատոմ Ջանջուղազյան

ԳԿ/2548-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՁՊ-2/5-1

« 31 » 01 2012 թ.

N 88/ԱԳ-Ս-5/538-12

Ձեք 2012-01-27, 15/15.1/971-12

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ  
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության  
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Գուրգեն Մելիքյանի  
բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ստացված բեռի ներմուծման  
ծրագրի մասին» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ  
ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:


Հարգանքներով՝

Յ. Բերիկյան

040/2417-12

Կատարող՝ Միջազգային կապերի բաժին  
հեռ. 563-791

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 <http://www.mss.am>



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ՁՊ-2/5-1

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ԱԱ/3-6/678-12  
30.01.12

ՀՀ կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման  
հանձնաժողովի նախագահ  
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեք ս/թ. հունվարի 27-ի համար 15/15.1/971-12 գրությամբ կարծիքի  
ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման  
հանձնաժողովի «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի  
հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագիծի  
վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱՆՎԵՐԴՅԱՆ

044/2100-12

Կատարող՝ Լ. Հակոբյան  
միջազգային հարաբերությունների բաժին  
հեռ. 39 43 49

«Գուրգեն Մելիքյանի բազմազգազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

Հիմնավորում	Դիտողության կամ արագափրկության բովանդակությունը
ՀՀ ֆինանսների նախարարություն – 01.02.12, N 3/3.8-2/999-12	
1. Կատարված է լրացում	1. Նախագծի 3-րդ կետում ավելացնել նաև ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ՀՀ Սյունիքի, Արմավիրի, Լոռու, Շիրակի մարզպետներին ու Երևանի քաղաքապետին

ձև - 2/5.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

\_\_\_ փետրվարի 2012 թվականի N Մ- քաղ. երևան

-Ա ձև - 2/5.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի N Մ-671-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2011 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 2029 գրությունը ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի դեկտեմբերի -ի N 3/3.8-1/-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի դեկտեմբերի -ի N -11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի դեկտեմբերի -ի N 3/3.8-1/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի դեկտեմբերի -ի N 3/3-4/-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 5-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի կահավորում» ծրագրի մասին» N Մ-671-Ա (2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-852-Ա և 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1103-Ա որոշումների խմբագրությամբ) որոշման 1-ին և կից ծրագրի 6-րդ կետում բյուջեն դարձնել 216.393.613 դրամ (ծրագրի լրամշակված տարբերակը կցված է).

2. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված՝ ստորև նշված բեռները ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում՝

1) ուռուլոգիական լաբորասկոպիկ սարք (3 տեղ, 230 կգ ընդհանուր քաշով, 25000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1288 եվրո, «Ձվարթնոց» Մ/Տ),

2) երեսպատման սալիկներ՝ մամլված գրանիտ (24 տեղ, 21340 կգ ընդհանուր քաշով, 22489.53 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2446 եվրո, «Արարատյան» Տ/Մ),



3) գրանիտե սալիկներ, երեսպատման սալիկներ՝ պրեսգրանիտ, հեռախոսներ լարով, լուսատուներ (229 տեղ, 11200 կգ ընդհանուր քաշով, 44377 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» S/Մ),


4) խոհանոցային և լվացքատան սանտեխնիկա՝ (18 տեղ, 5673 կգ ընդհանուր քաշով, 122988.26 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3282 եվրո, «Արարատյան» S/Մ),

5) պոմպ ջրի, բաղկացուցիչ մասերով՝ (2 տեղ, 722 կգ ընդհանուր քաշով, 5.744.1 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 500 եվրո, ՄՃՓ S/Մ),

6) մետաղական բժշկական թթվածնային գազի բալոններ՝ (3 տեղ, 171 կգ ընդհանուր քաշով, 1.256.8 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1905 ԱՄՆ-ի դոլար, ՄՓևԱՍՓԱՄ Մ/S),

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքապետին:

Ձ-2/5.2



«Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի կառավարման ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	«Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի համար ներկրել և տեղադրել սարքավորումներ, կահույք և անհրաժեշտ շինարարական նյութեր՝ հիվանդանոցը ժամանակակից և բարձրակարգ պայմաններով ապահովելու նպատակով
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ԳՎԳԳ 04703401
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն համայնք, Հր. Ներսիսյան փողոց թիվ 19
6.	Ծրագրի բյուջեն	216,393,613 ՀՀ դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Մայր Աթոռը և «Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	25 հուլիսի 2011թ. – 31 օգոստոսի 2012թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է արտերկրից Հայաստան ներմուծել սարքավորումներ, կահույք և շինարարական նյութեր «Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի նորոգման, կահավորման և տեխնիկական վերազինման համար: Այս ծրագրի շրջանակներում նոր բեռներ ստացվելու դեպքում դրանք կներկայացվեն որպես հարակից գործարք:
10.	Չեղջ բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Ներկրված ապրանքատեսակներն են 1) օդի ֆիլտր 13 հատ, 160 կգ, գինը 3,750.45 եվրո կամ 2,000,340 դրամ, ճանապարհածախսը 30,144 դրամ, մաքսատանը վճարված գումարը 23,100 դրամ, ձևակերպվել է ՄՃՓ S/Մ-ում, C4590, առ 27.05.2011թ.: 2) պրես-գրանիտ 600քմ, մինի հեռախոսակայան 1 հատ, պլաստիկ խողովակներ 922մ, պլաստիկ արմատուրա 385կգ, ընդհանուր քաշը 15475կգ, գինը 62,624 ԱՄՆ դոլար կամ 23,596,723.2 դրամ, մաքսատանը վճարված գումարը 32,500 դրամ, ձևակերպվել է Արարատյան S/Մ-ում, C15093, առ 27.05.2011թ.: 3) օգոնային, թթվածնային, աերոզոլային բերապիայի սարքավորումներ 210 հատ, 64.89 կգ, գինը 10000.2 ԱՄՆ դոլար կամ 3,694,273.88 դրամ, ճանապարհածախսը 312,160 դրամ, մաքսատանը վճարված գումարը 17,080 դրամ, ձևակերպվել է ՄՓեԱՍՓԱՄ Մ/S-ում, C6359, առ 07.07.2011թ.: 4) գրանիտե սալիկներ, շրիչակներ, խառնիչային ծորակներ, կերամիկական լվացարաններ, լուսատուներ, 24060 կգ, գինը 66,619 ԱՄՆ դոլար կամ 24,902,848.39 դրամ, մաքսատանը վճարված գումարը 52,200 դրամ, ձևակերպվել է Արարատյան S/Մ-ում, C18323, առ 22.06.2011թ.: 5) յուղաներկ, ցեմենտ, սոսինձ 20500 կգ, գինը 9358.32 եվրո կամ 4,970,016.59 դրամ, ճանապարհածախսը 1,127,010 դրամ, մաքսատանը վճարված գումարը 31,500 դրամ, ձևակերպվել է Արարատյան S/Մ-ում, C17809, առ 17.06.2011թ.: 6) օգոնային, թթվածնային, աերոզոլային բերապիայի սարքավորումներ 90 հատ, 13.5 կգ, գինը 108 ԱՄՆ դոլար կամ 39,836.88 դրամ, ճանապարհածախսը 113,240 դրամ, մաքսատանը վճարված գումարը 6600 դրամ, ձևակերպվել է ՄՓեԱՍՓԱՄ Մ/S-ում, C6242, առ 01.07.2011թ.:



№ 2/5.2

Թիվ 405

19 դեկտեմբերի, 2011թ.

ՄԵԾԱՐԳՈՒ ՏԻՍՐ ՄԻՍՈՆ ՏԵՐ-ՄԻՍՈՆՅԱՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԵՐԼԱՆ

Մեծարգո Պրն. Տեր-Սիմոնյան,  
Ի պատասխան Ձեր 08 դեկտեմբերի 2011 թվականի թիվ 15/15,8/19794-11 գրության՝ ներկայացնում ենք 05 օգոստոսի 2011 թվականի N Մ-671-Ա որոշմամբ հաստատված «Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի կահավորման ծրագրի և որոշման մեջ կատարված և առաջարկվող փոփոխությունների վերանայված տարբերակը.

1) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 30 սեպտեմբերի 2011 թվականի NU-852-Ա որոշմամբ ծրագրի բյուջեն դարձել էր 69,203,418 դրամ,

2) Մայր Աթոռի կողմից 21 նոյեմբերի 2011 թվականին ներկայացված թիվ 1946 գրության համաձայն առաջարկվում էր ծրագրի բյուջեն ավելացնել 33,314,720 դրամով:

3) Մայր Աթոռի կողմից 01 դեկտեմբերի 2011 թվականին ներկայացված թիվ 2029 գրության համաձայն առաջարկվում էր ծրագրի բյուջեն ավելացնել 109,482,554 դրամով,

Այսպիսով ծրագրի ընդհանուր բյուջեն դառնում է 212,000,692 դրամ (69,203,418+109,482,554+33,314,720), ուստի խնդրում ենք թիվ 2029 և 1946 գրություններով ներկայացված գործարքները ներառել միևնույն որոշման մեջ և 05 օգոստոսի 2011 թվականի NU-671-Ա որոշման 1-ին և կից ծրագրի 6-րդ կետերում «25,597,063 դրամ» բառերը փոխարինել «212,000,692 դրամ» բառերով:

Առ Աստված աղոթքով մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, գործոց հաջողություններ և ամենայն բարիք:

Թրինությամբ  
  
ՍՈՒՐԵՐ ԵՊՈՒՄՆԱՆՈՍ ԲԱԲԱՅԱՆ  
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ ՏՆՕՐԵՆ

Առդիր 4 թերթ:

31/12 ✓

« ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՇԿԱՏԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ 19 12 2011 »

- № 2/5.2
- 7) ուղեգորգեր 450քմ, 1800 կգ, գինը 22,500 ԱՄՆ դոլար կամ 8,226,450 դրամ, մաքսատանը վճարված գումարը 27,395 դրամ, ձևակերպվել է Արարատյան Տ/Ս-ում, C22713, առ 26.07.2011թ.:
  - 8) Մահճակալներ բժշկական, ներմուծման համար 04.10.2011թ. կնքված եռակողմ պայմանագիր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ԴԲԸՄ Դայաստանի ներկայացուցչության և «Այգեծոր» ՍՊԸ-ի (ԴՎԴԴ 00815501) միջև, 33 314 720 ԴԴ դրամ արժեքով, առանց ԱԱՀ:
  - 9) Ուռուղիական լաբորատորիա սարք, բրուտտո քաշը 230 կգ, գինը 25,000 Եվրո կամ 12,979,500 դրամ, ճանապարհածախսը 668,719 դրամ, մաքսատանը վճարված գումարը 6000 դրամ, ձևակերպվել է «Զվարթնոց» Ս/Տ-ում, C 16831, առ 02.11.2011թ.,
  - 10) Երեսապատման սալիկներ՝ մամուլված գրանիտ, բրուտտո քաշը 21340 կգ, գինը 22,489.53 Եվրո կամ 11,247,914 դրամ, ճանապարհածախսը 1,223,475 դրամ, մաքսատանը վճարված գումարը 28,600 դրամ, ձևակերպվել է Արարատյան Տ/Ս-ում, C 31005, առ 28.09.2011թ.,
  - 11) Գրանիտե սալիկներ, երեսապատման սալիկներ՝ պրեսգրանիտ, հեռախոսներ լարով, լուսատուներ, բրուտտո քաշը 11200 կգ, գինը 44,377 ԱՄՆ դոլար կամ 16,774,950 դրամ, մաքսատանը վճարված գումարը 27,400 դրամ, ձևակերպվել է Արարատյան Տ/Ս-ում, C 35146, առ 27.10.2011թ.,
  - 12) Խոհանոցային և լվացքատան տեխնիկա, բրուտտո քաշը 5673 կգ, գինը 122,988.26 Եվրո կամ 64,723,802 դրամ, ճանապարհածախսը 1,727,595 դրամ, մաքսատանը վճարված գումարը 74,600 դրամ, ձևակերպվել է Արարատյան Տ/Ս-ում, C 37237, առ 10.11.2011թ.:
  - 13) Պոնպ ջրի բաղկացուցիչ մասերով, բրուտտո քաշը 722 կգ, գինը 5,744.1 Եվրո կամ 2,912,661 դրամ, ճանապարհածախսը 253,535 դրամ, մաքսատանը վճարված գումարը 11,500 դրամ, ձևակերպվել է ՄՃՓ Տ/Ս-ում, C 12346, առ 01.12.2011թ.,
  - 14) Մետաղական բժշկական թթվածնային գազի բալոններ, բրուտտո քաշը 171 կգ, գինը 1,256.8 ԱՄՆ դոլար կամ 480,462 դրամ, ճանապարհածախսը 728,262 դրամ, մաքսատանը վճարված գումարը 6,500 դրամ, ձևակերպվել է ՄՓԵԱՍՓԱՄ Ս/Տ-ում, C 12948, առ 16.12.2011թ.:

11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ քաղաքաշինության նախարարության, Առողջապահության նախարարության, Երևանի քաղաքապետարանի և «Այգեծոր» ՍՊԸ-ի հետ:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԻ ԷԶՄԻԱԾԻՆ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ  
ԳԻՎԱՆԱՏՈՒՆ



MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN  
CATHOLICOSATE  
CHANCELLERY

Մ-2/5.2  
1 դեկտեմբերի, 2011թ.

Թիվ 2029

ՄԵԾԱՐԳՈ  
ՏԻՐ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ  
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
Երևան

Մեծարգո Պրն. Տեր-Սիմոնյան,  
2011թ. օգոստոսի 5-ի N Մ-671-Ա որոշմամբ (30.09.2011թ. N Մ-852-Ա որոշմամբ  
խմբագրված) բարեգործական որակված «Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի  
կահավորման ծրագրի շրջանակներում ՀԲԸՄ-ի միջոցներով ստացվել են հետևյալ բեռները՝

1. Ուելոլոգիական լաբորակոպիկ սարք, բրուտտո քաշը 230 կգ, գինը 25,000 Եվրո  
կամ 12,979,500 դրամ, ճանապարհածախսը 668,719 դրամ, մաքսատանը վճարված  
գումարը 6000 դրամ, ձևակերպվել է «Զվարթնոց» Մ/Տ-ում, C 16831, առ  
02.11.2011թ.,
2. Երեսապատման սալիկներ՝ մամված գրանիտ, բրուտտո քաշը 21340 կգ, գինը  
22,489.53 Եվրո կամ 11,247,914 դրամ, ճանապարհածախսը 1,223,475 դրամ,  
մաքսատանը վճարված գումարը 28,600 դրամ, ձևակերպվել է Արարատյան Տ/Ս-ում,  
C 31005, առ 28.09.2011թ.,
3. Գրանիտե սալիկներ, երեսապատման սալիկներ՝ պրեսգրանիտ, հեռախոսներ  
լարով, լուսատուներ, բրուտտո քաշը 11200 կգ, գինը 44,377 ԱՄՆ դոլար կամ  
16,774,950 դրամ, մաքսատանը վճարված գումարը 27,400 դրամ, ձևակերպվել է  
Արարատյան Տ/Ս-ում, C 35146, առ 27.10.2011թ., *Ներսիսյան*
4. Խոհանոցային և լվացքատան տեխնիկա, բրուտտո քաշը 5673 կգ, գինը 122,988.26  
Եվրո կամ 64,723,802 դրամ, ճանապարհածախսը 1,727,595 դրամ, մաքսատանը  
վճարված գումարը 74,600 դրամ, ձևակերպվել է Արարատյան Տ/Ս-ում, C 37237, առ  
10.11.2011թ.:

Խնդրում ենք հիշյալ ծրագրի շրջանակներում ստացված այս բեռները  
բարեգործական որակել՝ հարկերից ազատվելու նպատակով, ըստ այդմ էլ N Մ-671-Ա  
որոշման (30.09.2011թ. N Մ-852-Ա որոշմամբ խմբագրված) 1-ին և կից ծրագրի 6-րդ  
կետերում կատարել համապատասխան փոփոխություններ՝ ավելացնելով ծրագրի բյուջեն  
109,482,554 դրամով:

Կից ներկայացնում ենք N Մ-671-Ա, N Մ-852-Ա որոշների և ստացված բեռների  
հայտարարագրերի պատճենները:

Առ Աստված աղոթքով մաղթում ենք Ձեզ բաջառողջություն, գործոց հաջողություններ  
և ամենայն բարիք:

Օրինությամբ  
*[Signature]*  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ  
ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԻ ԷԶՄԻԱԾԻՆ  
ԼՈՒՅՆՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ  
*[Stamp]*  
30/9/2011



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Զ Ա Պ Ե Տ

Մ-2/5.2

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1  
Հեռ. (+374 10) 59 52 26

31.01.2012թ. № 3/3.8-2/817-1

Ձեռք № \_\_\_\_\_

Հայաստանի Հանրապետության  
կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ՝  
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի լրումն մեր 2012 թվականի հունվարի 17-ի N3/3.8-2/290-12 գրության և հաշվի  
աննելով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի  
26.01.2012թ. N15/15.8/943-12 գրությամբ ուղարկված «Հայաստանի Հանրապետության  
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011  
թվականի օգոստոսի 5-ի N Մ-671-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություն  
կատարելու և նույն ծրագրին շրջանակներում բեռների ներմուծման մասին (Մայր Աթոռ  
Սուրբ Էջմիածին) որոշման նախագծի և կից ծրագրի լրամշակված տարբերակները, Ձեր  
05.12.2011թ. N15/15.8/19569-11 գրությամբ ներկայացված ՀՀ կառավարության  
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի  
վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացված որոշման նախագծի  
լրամշակված տարբերակի 2-րդ կետում նշել նաև բարեգործական բեռն ուղարկողի անունը:

Հարգանքով՝

*[Signature]*

Արտոմ Զանջուղայան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

034/2263-12  
31.01.2012թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՆԱԽԱՐԱՐ

ՁԲ-2/5.2

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13  
ֆաքս (+ 374 10) 56 27 83  
Էլ. փոստ minister@moh.am

8.12.2011թ. ՁԲ/22/11384-11

Ձեր N \_\_\_\_\_

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ  
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՊԱՐՈՆ Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 05.12.2011թ. թիվ 15/15.8/19569-11 գրության կապակցությամբ՝  
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 5-ի N Մ-671-Ա որոշման  
մեջ ու կից ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրին շրջանակներում  
բեռների ներմուծման մասին» որոշման նախագծի (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)  
վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր  
իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

Դերրայքային քաղաքականության բաժին  
Կատարող՝ Ն. Փափախյան  
Հեռախոս 52 27 21

020/36478-11  
8.12.2011թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՁԲ-2/5.2

« 7 » 12 2011 թ.

N ՁԲ/ԱԷԾ-5/9662-11

Ձեր 2011-12-05, 15/15.8/19569-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ  
պարոն Ա. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության  
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի  
օգոստոսի 5-ի N Մ-671-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություն կատարելու և նույն  
ծրագրին շրջանակներում բեռների ներմուծման մասին» (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)  
որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ  
դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքներով

Տ. Բերիկյան

Կատարող՝ Միջազգային կապերի բաժին  
հեռ.56-34-91

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 <http://www.mss.am>

040/36290-11  
7.12.2011թ



ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

*N: ՆԿ/3-6/710-12*  
*30.01.2012թ*

**ՀՀ կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման  
հանձնաժողովի նախագահ  
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հունվարի 26-ի համար 15/15.8/943-12 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի» հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին > որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է որոշման նախագծի 4-րդ կետում նշված «<122988.26 եվրո>> բառերը փոխարինել «<120921.17 եվրո ներառյալ ճանապարհաձախսը>> բառերով:

**Ա. ԱՆԱԿԵՐԴՅԱՆ**

կադրող՝ Կ. Սարգսյան  
միջազգային հարաբերությունների բաժին  
հեռ. 59 43 49

*044/2187-12*  
*30.01.2012թ*

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 5-ի N Մ-671-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին» (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի) որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Հիմնավորում	Դիտողության կամ առաջարկության բավարարվածությունը
Հիմնավորում	ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ
Հիմնավորում	- անհրաժեշտ է որոշման նախագծի լրանցված տարբերակի 2-րդ կետում նշել նախ բարեգործական բեռն ուղարկողի անունը: - անհրաժեշտ է որոշման նախագծի 4-րդ կետում նշված «122988.26 եվրո» բառերը փոխարինել «120921.17 եվրո, ներառյալ ճանապարհաձախսը» բառերով:
Հիմնավորում	ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ
Հիմնավորում	Մայրաքաղաքի արժեքը ներկայացված է ըստ հայտարարագրի՝ 122988.26 եվրո:

*Ն-2/5.2*

1 ՀԱՏՏԱՐԱՐԱԳԻՐ IM 5		10 Արարատյան ՏԱՄ Գրանցման համար: C 37237 10/11/2011 ՄակիՖեա:	
2 Արտահանող «Teknolux Endustriyel Mulfak San.Tic.Ltd.Sti.» p.Արարատ,Թուրքիա		3 Չևեր 4 Թեղեր 1 11 18	
5 Ապրանք Ցեղ, քանակ 30 107		7 Տեղեկատու համար 2011 000027	
8 Լցումնող No 04703401 «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին» Էջմիածին վանք p. Էջմիածին «Mather see Holy Etchmiadzin» c. Etchmiadzin		9 Ֆինանսական պատասխանատու... 04703401 «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին» Էջմիածին վանք p. Էջմիածին	
14 Հայտարարատու No 04703401 «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին» Էջմիածին վանք p. Էջմիածին		15 Արտահանման երկիր 15 Ա.Ե.Ց. 792 17 Լ.Ե.Ց. 051	
16 Տարածման երկիր ՏԱՐԲԵՐ		17 Լցանական երկիր Հայաստան	
18 Փոխարկաբեկի սեփական / ժամանակն վարում 1-ԱՆՆԵՐ՝ ՏԵՍ ՀԱՎԱՐԱԿ ԿՐՈՍԸ 792		20 Բազմաթիվ պայման	
21 Փոխարկաբեկ սահմանում 1-ԱՆՆԵՐ՝ ՏԵՍ ՀԱՎԱՐԱԿ ԿՐՈՍԸ 792		22 Տարադրամ / արժեք EUR 122,988.26	
23 Փոխարժեք 526.260		24 Գործարքի քանակ	
25 Փակեց 30 1 խանան		26 Ֆինանսական և բանկային տվյալ... Բանկի ծածկ Վճարման պայման...	
27 Բերանման / բերանաբանման վայր		28 Ֆինանսական և բանկային տվյալ... Բանկի անուն: մասնաճյուղ:	
29 Սարքային կետ 29 Բազմաթիվ ՄԿ		30 Արարատի գյուղատնտեսական վայր	
31 Տեղի, անուն, ապրանքի նկարագր.		32 Այլ 1 No.	
33 Ապրանքի ծածկագիր 85166059		34 Մ.Ե.Ց. 300 36 Արտատր քաղ (կգ) 76	
35 Արտատր քաղ (կգ) 5000		37 Ռեզիմ 000	
38 Լեռնոտ քաղ (կգ) 2011/22/4247		39 Բխոտ 67	
40		41 Լրաց. միավոր 769	
42 Ապրանքի գին 2,238.95		43 Մ.Ա.Մ. 4	
44 Լրաց. տեղ / հաստ բոլոր Լիցենզիա... / ԳԶ: 23,142 + 0 + 0 + 0 - 0 Պ.Փ.: 460 033		45	
46 Ապրանքի արժեք 1,201,412		47 Հարկերի հաշվարկ.	
48 Վճարման հետաձգում		49 Պահեստ / օր 90	
50 Ավագ No		51 Տարա... երկ. մտ.	
52 Երաշխիք օրինական է		53 Լցանական... Տվյալ...	
54 Կայր և... համակ		55 Կայր և... համակ	

ՀԱՏՏԱՐԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
— փետրվարի 2012 թվականի N Մ - -Ա  
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N Մ-153-Ա ՈՐՈՇԵՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ԵՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒՇՄԱՆ ՄԱՍԻՆ  
 («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի -ի N 3/3.8-2/12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի -ի N ԱԱՄ/3-6/-12 եզրակացությունները, որոշում է.


1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-153-Ա որոշմամբ (2009 թվականի հոկտեմբերի 9-ի N Մ-704-Ա, 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-704-Ա, 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-059-Ա և 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-523-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված ամրանները (50 տեղ, 131745 կգ ընդհանուր քաշով, 42695250 դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀՀ ԿԸ ՄԻՈՎ  
ԱՐԱՐԱՏԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ  
ԵՆՏՐՎԱԾ Է ԿԱՆՈՎՈՒՄ  
ՔԱՆՈՒՄ ԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ  
ՄԱՐՏԻ 2-Ի N Մ-153-Ա  
ՍԵՐԻԱԿԱՆ ՆՈՒՄՅՐ 34825-111


Արարատյան տարածքային մարզային վարչակազմի  
Տնօրենի  
Ստամբուլ  
11 NOV 2011



Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի անվանումը	«Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում»
2.	Ծրագրի անմիջական նպատակները	ՀՀ ֆուտբոլային ենթակառուցվածքների զարգացում
3.	Բարեգործը (բարեգործները)	Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միություն-ՈՒԵՖԱ, (Շվեյցարիա, Ժնև), Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիա-ՖԻՖԱ, (Շվեյցարիա, Ցյուրիխ)
4.	Ծրագրի բարեգործական որակման նպատակներն ըստ ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի № 66-Ն որոշմանը հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի	Նախատեսում ենք ծրագրի շրջանակներում՝ օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
5.	Ծրագիրն իրականացնողները	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, բաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915)
6.	Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը	Ծրագիրն իրականացվում է Երևան քաղաքում՝ սպորտի բնագավառում:
7.	Ծրագրի շահառուները կամ նրանց ընտրության սկզբունքները, չափանիշները	«Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոց»
8.	Ծրագրի իրականացման տևողությունը և/կամ ավելիքը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2007 թվականի մարտի 1-ից մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը:
9.	Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<ol style="list-style-type: none"> <li>1. Ընդհանուր շինարարական աշխատանքներ 4144.2 մլն. դրամ</li> <li>2. Բժշկական սարքավորումների ներմուծում՝ 25 մլն. դրամ</li> <li>3. Լուսավորություն՝ 410 մլն. դրամ</li> <li>4. Մարզադպրոցի մանրահատուկ՝ 70 մլն. դրամ</li> <li>5. Կահավորում՝ 150 մլն. դրամ</li> <li>6. Շինանյութի և ներքին հարդարման պարագաների ներմուծում՝ 800 մլն. դրամ</li> </ol> <p>Գումարները նշված են առանց ԱԱՀ-ի:</p>
10.	Չեռք բերվելիք սպրանքների, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	<p>Մարզադպրոցի շենքի կառուցման նախագծի կազմում («Երևաննախագիծ ՓԲԸ-ի կողմից») 17,2 մլն. դրամ, մասնաշենքի շինարարական աշխատանքների իրականացում՝ 1823 մլն. դրամ, տեխնիկական հսկողությունը՝ 1,56 մլն. դրամ, հեղինակային հսկողություն՝ 7,44 մլն. դրամ, լողավազանի և վերականգնողական կենտրոնի կառուցում՝ 600 մլն. դրամ, խաղադաշտերի համար տրիբունաների կառուցում՝ ստորին մասում տեղադրված հանդիսարաններով՝ 1150 մլն. դրամ: Նախատեսվում է կառուցել նաև 1 հատ արհեստական խոտածածկով խաղադաշտ՝ 175 մլն. դրամ (որի համար ՖԻՖԱ-ն տրամադրել է 400 հազար ԱԱՀ դոլար) և 10 հատ</p> <p style="text-align: right;">4-2/5</p>

		ստանդարտ չափերի խաղադաշտ՝ 370 մլն. դրամ: Բժշկական սարքավորումների ներմուծում՝ 25 մլն. դրամ, լուսավորության սարքավորումների ներմուծում՝ 410 մլն. դրամ, մարզադպրոցի մանրահատուկ ներմուծում՝ 70 մլն. դրամ, շինանյութի և ներքին հարդարման պարագաների ներմուծում՝ 800 մլն. դրամ: Կահավորում 150 մլն. դրամ: Գումարները նշված են առանց ԱԱՀ-ի:
11.	Գործարքները, որոնցով ակնկալվում է հարկերի, տուրքերի և այլ պարտավոր վճարների վճարումից ազատում	Ակնկալվում է մարզադպրոցի կառուցման շինարարական և կահավորման աշխատանքների իրականացման, անհրաժեշտ նյութերի ներմուծման և ձեռքբերման գործարքների դիմաց հարկային արտոնություն:
12.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն 5599.2 մլն. դրամ է, որից՝ 5278.3 մլն. դրամ ՈՒԵՖԱ-ն: 320.9 մլն. դրամ ՖԻՖԱ-ն:
13.	Անմիջականորեն շահառուների սպառմանը չտարվող ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն մոխատեսվում:
14.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ (եթե համագործակցություն նախատեսվում է), համագործակցության բովանդակությունը, իրականացման կարգը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ:
15.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը (եթե վերահսկողություն նախատեսվում է)	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրառվում է կիրառվում է ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի (ֆինանսական ատրիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համանաժողովի կողմից:



«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ

Ռ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

4-2/5.3



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼ ՖԵԴԵՐԱՑԻԱ**  
**FOOTBALL FEDERATION OF ARMENIA**

31.01.2012 թ.  
Ֆ/1 006

*Վ-2/5.3*

ՀՀ կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողովի  
նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան  
Ի պատասխան ՀՀ Ֆինանսների նախարարության 2012 թ. հունվարի 18-ի  
N 3/3.8-2/313-12 գրության կից Ձեզ ենք ներկայացնում 2011թ-ի հուլիսի 1-ին  
ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման  
հանձնաժողովի N Մ-523Ա որոշմամբ հաստատված «Ֆուտբոլի  
մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի  
լրամշակված տարբերակը:  
Խնդրում ենք Ձեր միջնորդությունը՝ վերը նշված ծրագիրը նոր  
խմբագրությամբ հաստատելու համար:

Հարգանքներով՝

Ռ. Հայրապետյան  
ՀՖՖ նախագահ

*[Handwritten Signature]*

*134*

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԴՐԱԳՐԵՐԻ  
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՋՈՎԻ  
09472332  
31 01 2012



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

*Վ-2/5.3*

0010, Երևան, Մեխր-Սիմոնյան փող. 1  
Հեռ. (+374 10) 59 52 26

*18.01.2012 թ. № 3/3.8-2/313-12*

Ձեր № \_\_\_\_\_

Հայաստանի Հանրապետության  
կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ՝  
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 16.01.2012թ. N15/15.6/307-12 գրությամբ ներկայացված Հայաստանի  
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման  
հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի N Մ-153-Ա որոշմամբ հաստատված ծրագրի  
շրջանակներում բեռների ներմուծման մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա»  
իրավաբանական անձանց միություն) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ ՀՀ  
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի վերը նշված  
որոշմամբ (2009 թվականի հոկտեմբերի 9-ի N Մ-704-Ա, 2010 թվականի հոկտեմբերի 29-ի  
N Մ-704-Ա, 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-059-Ա և 2011 թվականի հուլիսի 1-ի  
N Մ-523-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի 10-րդ կետով  
նախատեսված 1,055,000,000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով բեռների դիմաց մեր  
հաշվարկներով նույն ծրագրի շրջանակներում ներմուծվել է արդեն 1,054,090,000 դրամ  
գումարի չափով ապրանքներ: Ներկայացված որոշման նախագծով նախատեսված ևս  
42,695,250 դրամ ընդհանուր արժողությամբ բեռների ներմուծման դեպքում արտերկրից  
ստացված բեռների ընդհանուր արժեքը կկազմի 1,096,785,000 ՀՀ դրամ, որը 41,785,000  
ՀՀ դրամով (1,096,785,000 - 1,055,000,000) կգերազանցի ծրագրով նախատեսված  
համապատասխան ծախսերը:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք ՀՀ կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի N Մ-153-Ա

*034/1082-12*  
*18.01.2012թ*







ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ՁԻՁ/Տ.3

որոշմամբ ( 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-704-Ա, 2011 թվականի փետրվարի 18-ի  
N Մ-059-Ա և 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-523-Ա որոշումների խմբագրությամբ)  
հաստատված ծրագրում կատարել համապատասխան փոփոխություններ:

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

N: ՁԻՁ/3-6/312-12  
17.01.2012թ

Հարգանքով՝

Ասոմ Զանցուղազյան

ՁԻՁ/Տ.3

«Հ կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման  
հանձնաժողովի նախագահ  
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հունվարի 16-ի համար 15/15.6/307-12 գրությամբ կարծիքի  
ներկայացված «Հ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման  
հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի N Մ-153-Ա  
որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին  
(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)»  
որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

Ա. ԱՆԱՎԵՐԴՅԱՆ

կատարող՝ Լ. Հակոբյան  
միջազգային հարաբերությունների բաժին  
հեռ. 59 43 49

044/965-12  
17.01.2012թ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի N Մ-153-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին» («Հայաստանի ֆոտոթղի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն) որոշման նախագծի կապակցությամբ դիտորդությունների վերաբերյալ

<p>Պիտոլության կամ առաջարկության բավանդակությունը</p>	<p>Հիմնավորում</p>
<p>ՀՀ ֆինանսների նախարարության դիտորդությունների և առաջարկությունների վերաբերյալ</p> <p>ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի վերը նշված որոշմամբ (2009 թվականի հոկտեմբերի 9-ի N Մ-704-Ա, 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-704-Ա, 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-059-Ա և 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-523-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի 10-րդ կետով նախատեսված 1,055,000,000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով բեռների դիմաց մեր հաշվարկներով նույն ծրագրի շրջանակներում ներմուծվել է արդեն 1,054,090,000 դրամ գումարի չափով ապրանքներ: Ներկայացված որոշման նախագծով նախատեսված և 42,695,250 դրամ ընդհանուր արժողությամբ բեռների ներմուծման դեպքում արտերկրից ստացված բեռների ընդհանուր արժեքը կկազմի 1,096,785,000 ՀՀ դրամ, որը 41,785,000 ՀՀ դրամով (1,096,785,000 - 1,055,000,000) կզերտագցի ծրագրով նախատեսված համապատասխան ծախսերը: Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի N Մ-153-Ա որոշմամբ ( 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-704-Ա, 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-059-Ա և 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-523-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրում կատարել համապատասխան փոփոխություններ:</p>	<p>Դիտորդությունը հաշվի է առնվել, նախագիծը քանաշակվել է:</p> <p style="text-align: right; font-size: 2em;">20.2/5.3</p>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
 — փետրվարի 2012 թվականի N Մ- -Ա  
 քաղ. Երևան 20.2/5.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N Մ-299-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի -ի N 3/3.8-2/-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի -ի N ԱԱ/3-6/-12 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի 2012 թվականի հունվարի 17-ի գրությունը, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծման և անհատույց բաշխման» ծրագրի մասին» N Մ-299-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «մինչև 2011 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «մինչև 2012 թվականի փետրվարի 28-ը» բառերով:
2. Սահմանել, որ սիրիահայ բարերար Կաբրիել Ուհանեսի Ղենբերջի միջոցով «Հայաստանի հանրային ուղիորդներության երաժշտախմբերի աջակցման» հիմնադրամի համար, «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված երաժշտական գործիքները (33 տեղ, 1216 կգ ընդհանուր քաշով, 10325 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2000 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

ՁԲ 2/5.4

0010, Երևան, Մելիք-Արամյան փող. 1  
Հեռ. (+374 10) 59 52 26

23.01.2012թ. № 9/3.3-2/566-12

Ձեր № \_\_\_\_\_

Հայաստանի Հանրապետության  
կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ՝  
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 19.01.2012թ. N15/15.6/536-12 գրությամբ ներկայացված Հայաստանի  
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման  
հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի N Մ-299-Ա որոշմամբ հաստատված ծրագրի  
շրջանակներում բեռների ներմուծման մասին ՀՀ կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ  
առարկություններ չունենք, սակայն առաջարկում ենք որոշման նախագծի 1-ին կետում նշել  
բարեգործական բեռն ստացող շահառուի տվյալները և բեռի հատկացման նպատակը:

Հարգանքով՝

Ատոմ Զանջուղազյան

034/1576-12

23.01.2012թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Ը Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ ՁԲ 2/5.4

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

№ 1666/3-6/434-12  
20.01.2012թ.

ՀՀ կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման  
հանձնաժողովի նախագահ  
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հունվարի 19-ի համար 15/15.6/536-12 գրությամբ կարծիքի  
ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման  
հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի N Մ-299-Ա  
որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգելու և նույն  
ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Փյունիկ» բարեգործական  
հիմնադրամի)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱԿԵՐԴՅԱՆ

044/1352-12

20.01.2012թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի N Մ-299-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգելու և նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին» («Փյունիկ» բարեգործական հիմնադրամ) որոշման նախագծի կապակցությամբ արագարկությունների և դիտորդությունների վերաբերյալ

Դիտորդության կամ արագարկության բավանդակությունը	Հիմնավորում
<b>ՀՀ ֆինանսների նախարարության</b>	
<b>դիտորդությունների և արագարկությունների վերաբերյալ</b>	
- Առաջարկում ենք որոշման նախագծի 1-ին կետում նշել բարեգործական բեռն ստացող շահառուի տվյալները և բեռի հատկացման նպատակը:	Դիտորդությունը հաշվի է առնվել, նախագիծը լրանշակվել է:

Մ 2/54

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
2012 թվականի N Մ- \_\_\_\_\_ -Ա  
քաղ. երևան

Մ 2/61

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-90-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկույրոցի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)

Հայասրանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայասրանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հունվարի 23-ի N ՍԲ/15-1/439-12 գրությունը և Հայասրանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 1-ի N 3/3.8-1/985-11 ու Հայասրանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 31-ի N ԱԱ/3-4/736-11 եզրակացությունները, որոշում է:

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկույրոցի ու մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկույրոցի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-90-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-821-Ա և դեկտեմբերի 15-ի N Մ-1070-Ա որոշումների խմբագրություններով) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ՀՎՀՀ՝ 02551144) և «Լուսաշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00051239) 2011 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված՝ N ՀՀ ԱՆ ԱԾԻԳ-ՊԸԱՇՁԲ-11/3 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է թվով 11 տուբերկույրոցային կաբինետների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների իրականացում՝ 3454000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Մ 2/6.1

0010, Երևան, Մելիք-Աղայան փող. 1  
Հեռ. (+374 10) 59 52 26

01.02.12 № 3/3.8-1/985-12

Ձեր № \_\_\_\_\_

Հայաստանի Հանրապետության  
կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահի  
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 27.01.12թ. N 15/15.4/982-12 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ. փետրվարի 18-ի N Մ-90-Ա («Հայաստանի հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագիր») որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի («Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և «Լուսաշ» ՍՊԸ-ի հետ կնքված գործարք) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուղայան

№ 034/2528-12  
01.02.12թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Ն Ա Գ Ա Հ Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ Մ 2/6.1

0015, Երևան, Մ.Խորենացու 3,  
Հեռ. 50 20 20, 59 46 05

№ 204/3-4/736-12  
31.01.12թ

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ  
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 27.01.2012թ. թիվ 15/15.4/982-12 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի N Մ-90-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում», դրամաշնորհային ծրագիր)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալախչերյան

№ 044/2324-12  
31.01.12

Մ-2/6.2

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

----- 2012 թվականի N Մ-  
քաղ. երևան -Ա

Մ-2/6.2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-90-Ա ԵՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ-228-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկույրոգի կառավարման ընդլայնում», «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»)**

